

ՆՈՐ ԲԱՌԵՐԻ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ (ՀԱՅԵՐԵՆ-ՌՈՒՍԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ) ԱՌՑԱՆՑ ԲԱՌԱՐԱՆԻ
ՍՏԵՂԾՈՒՄ. ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Բանալի բառեր՝ առցանց, օտարաբանություն, նորաբանություն, հայերեն, ռուսերեն, անգլերեն, բառարան, թարգմանություն, ձևաբանական նկարագիր:

Keywords: online, barbarism, neologism, Armenian, Russian, English, dictionary, translation, morphological description.

Հայտնի է, որ բառարանների դերն անգնահատելի է ինչպես լեզվական որևէ քննություն կատարելու տեսանկյունից, այնպես էլ հաղորդակցական գործընթացներում առհասարակ: Կարևոր են ինչպես միալեզվյան տարաբնույթ և տարատեսակ բառարանները, այնպես էլ թարգմանական՝ երկլեզվյան կամ բազմալեզվյան բառարանները: Գաղտնիք չէ, որ արդի ժամանակներում բառարաններից օգտվելու հրաշալի հնարավորություն է ընձեռում համացանցը, որում առցանց բառարաններին զուգահեռ՝ թվային տարբերակով առկա են հայերենին առնչվող միալեզվյան և թարգմանական գրեթե բոլոր հիմնարար բառարանները, որոնք հիմնականում ներբեռնված են nayiri.com էլեկտրոնային շտեմարանում: Արդյունավետ թարգմանական գործիքներ են Google Translate առցանց հարթակը, «Հայերեն օնլայն բառարանը», Վիքիբառարանը: Սակայն որքան էլ շատ են դրանք ներկայացված համացանցում, այնուամենայնիվ, բավարար չեն, և, կարծում ենք, անհրաժեշտություն կա նորանոր բառարանների ստեղծման և դրանց թվայնացման: Ստորև կներկայացնենք հայերեն նոր բառերի թարգմանական առցանց բառարանի ստեղծման անհրաժեշտությունն ու խնդիրները:

Լեզուն, ինչպես հայտնի է, անընդհատ փոփոխվում ու զարգանում է: Այդ փոփոխություններն առաջին հերթին վերաբերում են բառապաշարին, քանզի գիտության և տեխնիկայի զարգացումն իր հետ բերում է նոր եզրույթներ, արտահայտություններ, որոնք սովորաբար փոխառվում են այլ լեզուներից: Դրանք աննկատ մտնում են լեզվի բառային կազմ և հիմնականում դառնում համագործածական: Բնականաբար ժամանակի ընթացքում դրանց մի մասը թարգմանվում է հայերեն և, եթե հաջող է, փոխարինում է օտար բառին: Բազմաթիվ օտար բառեր իրենց հայերեն համարժեքներն ունեցան անկախության վերջին երեսուն տարում, և այսօր էլ մեր լեզուն, օրեցօր մաքրվելով անհարկի օտար բառերից, ավելի գեղեցկանում և հարստանում է նորակազմ բազմաթիվ բառերով: Ինչպես նկատում է Խաչիկ Բաղիկյանը, «...բոլորովին վերջերս դիսերտացիան դարձավ *ատենախոսություն*, ավտոռեֆերատը՝ *սեղմագիր*, ռեյտինգը՝ *վարկանիշ*, լեզվտիմը՝ *օրինական*, մենեջմենտը՝ *կառավարում*, ինվեստիցիան՝ *ներդրում*, կոռուպցիան՝ *կաշառատվություն* և հարյուրավոր այլ բառեր» [Բաղիկյան, 2012, 60]:

Օտար բառերի գործածությունը, բնականաբար, չի խրախուսվում, եթե դրանք ունեն իրենց հայերեն համարժեքները: Անհրաժեշտ է արդյոք բոլոր օտար բառերն ու եզրույթները թարգմանել հայերեն, դա այլ հարց է, որին անդրադառնալը սույն ուսումնասիրության խնդիրը չէ, և որին տարբեր ժամանակներում անդրադարձել են բազմաթիվ լեզվաբաններ: Նրանցից մի քանիսի արտահայտած տեսակետներն այդ առիթով ներկայացված են մեր՝ համահեղինակությամբ տպագրված հոդվածներից մեկում ևս, և մեր հիմնական մոտեցումն այն է, որ չպետք է ծայրահեղությունների մեջ ընկնել այս հարցում⁹⁰: Սակայն ինչպիսի՞ն կլինեն գրական հայերենն

⁹⁰Հմմտ. Վ. Ներսիսյան, Թ. Բատիկյան, Օտարաբանությունների և փոխառությունների գնահատման հարցը Էդուարդ Աղայանի «Հայ լեզվաբանության պատմություն» աշխատության էջերում, «Հայոց լեզվի ուսումնասիրության և ուսուցման արդի խնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2023, էջ 197-205:

այսօր, եթե շարունակեինք գործածել, օրինակ, *ռեկլամ, կոմպյուտեր, կոնդիցիոներ* և այլ բառեր՝ *գովազդ, համակարգիչ, օդորակիչ* նորակազմությունների փոխարեն: Անշուշտ, ոչ միայն գեղեցիկ և ականջահաճո են հայերեն տարբերակները, այլև խոստուն են բովանդակային առումով: Այդ առումով թերևս կարելի է հիշատակել բժշկական որոշ եզրույթներ (տերմիններ) ևս, ինչպես՝ *սրտաբան, ուռուցքաբան* ևն: Ի վերջո, օտար բառերի հայերենացումը ինչ-որ չափով նաև ազգային անվտանգության խնդիր է լուծում: Թերևս այս հարցում տեղին է մեջբերել Հովհաննես Զաքարյանի մոտեցումը. «Հայերենը պետք է զարգանա՝ համալրվի ու կատարելագործվի իր սեփական միջոցներով ու դրանց հիման վրա: Փոխառություններ կարող են կատարվել միայն ծայրահեղ դեպքերում և ժամանակավորապես:

Սա կարող ենք կոչել լեզվաշինական ինքնաբավ քաղաքականություն: Դա խիստ սկզբունքային նշանակություն ունի աշխարհասփյուռ հայության համար միասնական ազգային լեզու ունենալու հեռանկարի տեսակետից: Խնդիրն այն է, որ հայերը ցրված են մշակութային ազդեցության տարբեր ոլորտներում: Օտար լեզուների նկատմամբ կողմնորոշումները կարող են առավել մասնատել հայերենը: Միասնական ինքնաբավ քաղաքականությունը դրա միակ հակամիջոցն է» [Զաքարյան, 2010, 124]:

Համակարգչային եզրույթներն անգլերենից հայերեն թարգմանած և դրանց համապատասխան մի շարք հայերեն համարժեքները մշակած Խաչիկ Գրիգորյանը գրում է. «Թվում է, թե համակարգչային տեխնիկայի և ինտերնետի բուռն զարգացման պայմաններում բոլոր ազգերը պետք է դիմեին հիմնական համակարգչային եզրերի համատարած փոխառության անգլերենից: Սակայն ինչպես ցույց են տալիս դիտարկումները, նույնիսկ անգլերենին ցեղակից լեզուներում այդպիսի զանգվածային փոխառություններ չկան, այլ յուրաքանչյուր երկրում փորձում են ստեղծել համակարգչային եզրերի այս կամ այն աստիճանի ինքնուրույն համակարգ» [Գրիգորյան, 2004, 5]:

Մեր լեզվի ներքին միջոցները, բարեբախտաբար, թույլ են տալիս ստեղծելու բարեհունչ և բովանդակային առումով հասկանալի նոր բառեր, որոնք հաջողությամբ գործածվում են՝ հարստացնելով և կատարելագործելով գրական հայերենը: Երբեմն նույնիսկ մեկ օտար բառի համար առաջարկվում են մի քանի տարբերակներ: Սակայն հաճախ նորաստեղծ հայերեն բառերը ևս այլ լեզուներով թարգմանելու, իսկ երբեմն էլ հենց հայերեն բառի բացատրությունը տալու անհրաժեշտություն է առաջանում, և միշտ չէ, որ դա անելը դյուրին է թեկուզ մասնագետների շրջանում՝ պայմանավորված օտար բառին շատ սովոր լինելու հանգամանքով: Դա անհրաժեշտ է ոչ միայն օտարալեզու խոսք կառուցելիս, այլև գրական հայերենի տարբեր դրսևորումներում սովյալ բառը տեղին և ըստ էության գործածելիս:

Անհրաժեշտության դեպքում, իհարկե, օգտվում ենք առաջին հերթին ռուս-հայերեն, անգլերեն-հայերեն թարգմանական տարբեր բառարաններից, ինչպես նաև հայերեն՝ օտար բառերի բացատրական բառարաններից, որոնք հիմնականում ներբերված են համացանցում: Ներկայացնենք նորակազմ մի քանի հայերեն բառ՝ համապատասխան օտար տարբերակներով, որոնցում, թերևս, երկրորդ տարբերակն ավելի տարածված է:

Առաքելություն-միսիա
Բացառիկ, արտասովոր- ֆենոմենալ
Բեռնախցիկ-բազմնիկ
Զտիչ- ֆիլտր
Զրուցարան-չաթ
Զուգորդել-ասոցացնել
Ձևաթուղթ-բլանկ
Մաշկաբան-դերմատոլոգ
Կաթոցիկ- պիպետկա
Կոճգամ-կնոպկա
Չափանիշ-կրիտերիա
Համաձայնություն-կոնսենսուս

Հավակնոտ-ամբիցիոզ
 Համախմբում-կոնսոլիդացիա
 Մալուխ-կաբել
 Մանրակերտ- մակետ
 Մեկնաբանություն- քումենթ
 Մրցատյան-ժյուրի
 Նույնականացում-իդենտիֆիկացիա
 Շնորհանդես- պրեզենտացիա
 Չափանիշ- պարամետր
 Չափանմուշ-էտալոն
 Պաշտոնական-օֆիցիալ
 Վերջնաժամկետ-դեդլայն
 Ուրվանկար-էսքիզ
 Ցուցապաստառ-բաններ

Հրապարակի վրա, անշուշտ, կան բազմաթիվ բառարաններ, ձեռնարկներ, որոնք վերաբերում են օտարաբանություններին և նրանց հայերեն համարժեքներին⁹¹: Ուշագրավ բառարան է Խաչիկ Գրիգորյանի «Անգլերեն-հայերեն համակարգչային եզրերի բառարանը» (Երևան, 2004), որում ներկայացված են համակարգչային ոլորտին առնչվող օտար բառերի բացատրությունն ու դրանց հայերեն համարժեքների մշակումը: Օրինակ՝ **processor** բառը մեկնաբանվում է որպես **մշակիչ** սարքակազմային կամ ծրագրավորման սարք, որն ի վիճակի է կառավարելու կամ ձևափոխելու տվյալները՝ համաձայն հրահանգների, **array processor**՝ **զանգվածի մշակիչ** համակարգիչ, որը կարող է աշխատել տվյալների մի քանի զանգվածների հետ միաժամանակ.... [Գրիգորյան, 2004, 265]: Նույն բառահոդվածում ներկայացվում են նաև մի շարք բառակապակցություններ՝ հայերեն համարժեքներով, ինչպես **associative processor** - **գուգորդական մշակիչ**, **attached processor** - **կցված մշակիչ**, **auxiliary processor** - **օժանդակ մշակիչ**, **distributed processor** - **բաշխված մշակիչ**.... ևն [Նույն տեղում]: Օգտակար է բառարանին կցված հայերեն-անգլերեն համակարգչային եզրերի բառարանը, որը հեշտացնում է անգլերեն բառերի բացատրությունը: Մինչդեռ, օրինակ, **Google Translate** հավելվածում **մշակիչ** բառի անգլերեն թարգմանությունն է՝ **developer**: Վերջին տարիներին հրատարակվել և շարունակում են հրատարակվել նաև նորաբանությունների, նոր բառերի բառարաններ ⁹² : Այդ առումով գնահատելի աշխատանք է կատարում ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բառարանագրության բաժնի աշխատակազմը, որ գրեթե յուրաքանչյուր տարի տպագրության է ներկայացնում արդի հայերենի նոր բառերի մեկ պրակ⁹³: Կան նաև հայ-ռուսերեն, հայ-անգլերեն և նմանատիպ այլ թարգմանական բառարաններ՝ հայերենից օտար լեզուներ: Ուշագրավ և արժեքավոր աշխատություն է Պ. Բեդիրյանի և այլոց հեղինակած «Հայ-ռուսերեն գործնական բառարանը», որը պարունակում է շուրջ 23000 բառ և 4550 դարձվածային արտահայտություն և հիմք է ընդունել նույն հեղինակ-կազմողների «Ռուս-հայերեն, հայ-ռուսերեն բառարանը (Ե, 1987, 1988): Բառարանում «... իրենց արտացոլումն են գտել վերջին 20 տարիներին մեջտեղ եկած տնտեսական, քաղաքական, սոցիալ-մշակութային նոր երևույթները և հասկացությունները՝ իրենց լեզվական արտահայտություններով» [Բեդիրյան և այլք, 2010, 3]: Օրինակ՝ **սահիկ-слайд** [Նույն տեղում, 314]: Նկատենք, որ նրանից բաղադրված և գործուն բառապաշար մտած **սահիկաշար, սահիկահանդես** բառերը ներկայացված չեն նշված աշխատության մեջ:

⁹¹Հմմտ. Հայրապետյան Ա. Օտար բառերի բառարան, Երևան, 2011: Խ. Բադիկյան, Ճիշտ խոսենք հայերեն. Օտար բառերի բառարան, Երևան, 2012: Հայերեն օնլայն բառարան/ <https://bararanonline.com/>:

⁹²Հմմտ. Էլոյան Ս. Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Երևան, 2002: Ռ. Սաքապետոյան, Նոր և նորակազմ բառեր, Երևան, 2014:

⁹³Նոր բառեր, Ա-Զ պրակներ, ԳԱԱ ԼԻ, Երևան, 2015, 2016, 2017, 2018, 2020, 2021, 2022:

Որքան էլ շատ են օտարաբանություններին և նորակազմ հայերեն բառերին առնչվող բառարանները, միննույն է, դրանք բավարար չեն: Երբեմն նորակազմ հայերեն բառի օտար տարբերակները հնարավոր չի լինում գտնել ոչ միայն թղթային, այլև առցանց կամ թվայնացված որևէ բառարանում, որովհետև վերջիններում ներառված բառերը դուրս են բերվում ավելի վաղ հրատարակված և համացանցում ներբեռնված բառարաններից: Օրինակ՝ «**Հայերեն օնլայն բառարանը**» ներառում է հետևյալ բառարանները՝ **Է.Բ. Աղայան, «Արդի հայերենի բացատրական բառարան», Ա.Մ. Սուքիասյան, «Հայոց լեզվի հոմանիշների բառարան», Ե.Հ. Գալստյան, «Հայ-ռուսերեն բառարան», «Հականիշների բառարան»** (միավորված մի քանի աղբյուրներից), «**Հայերեն-անգլերեն բառարան**», **Ա. Ս. Ղարիբյան, «Ռուս-հայերեն բառարան»**⁹⁴:

Բացի այդ, պետք է հաշվի առնել բառերի իմաստային բազմազանությունը: Երբեմն լեզվում վաղուց գործածական բառերը ժամանակի ընթացքում ձեռք են բերում նոր իմաստներ, որոնք կարող են արձանագրված չլինել առկա բառարաններում: Այսպես՝ գիտակրթական տարբեր միջոցառումների, ներկայացումների ընթացքում հաճախ է գործածվում «**սահիկ**» բառը, որը փոխարինում է **slide** օտար բառին, սակայն մեր դիտարկած բառարաններում նշված իմաստով այն ընդգրկված չէ: Բացառություն է Պ. Բեդիրյանի «Հայ-ռուսերեն բառարանը», որը թվային տարբերակով առկա չէ համացանցում, և որոնելիս հիշյալ իմաստով տեղեկույթ չի ստացվում: Համապատասխան բառահոդվածում հետևյալ իմաստներն են նշված՝ 1. ածական՝ «սահուն» իմաստով, 2. տե՛ս շարժակ (բացատրությունն է՝ գոյական, զանազան մեխանիզմների՝ սարքերի մեջ՝ առանցքի երկարությամբ շարժական սահող մանրակ): Հոմանիշն է՝ **սահիկ**, իսկ ռուսերեն և անգլերեն տարբերակները չեն նշվում [Հայերեն օնլայն բառարան]: Մինչդեռ վերջին շրջանում հատկապես գիտաժողովների աշխատանքային հարթակներում գործածվում է նաև բառի **ցուցադրույթ** տարբերակը:

Կարծում ենք, որ անհրաժեշտ է ոչ միայն աշխատանքներ տանել թղթային բոլոր աղբյուրները թվայնացնելու ուղղությամբ, այլև ստեղծել հայերեն նորակազմ և նորիմաստային ոչ մեկանգամյա գործածածություն ունեցող, գեղարվեստական գրականությունից քաղված, այլ գոնե համագործածական բառերի առնվազն եռալեզու թարգմանական ևս մեկ բառարան, որը պետք է ձևավորվի նախապես մշակված համացանցային ծրագրով, ինչը հնարավորություն կտա ինչպես կազմելու, այնպես էլ հրնթացս այն լրացնելու, կատարելագործելու: Բառարանում բառահոդվածները կպարունակեն հայերեն բառերի բացատրական, ձևաբանական և ձևակազմական հիմնական նկարագրերը, ինչպես սովորաբար լինում է, և երկլեզու թարգմանությունը:

Օրինակ՝

ԱՆՎԱՆԱԿԱՐԳ – (գոյական, **հ** հոլովում, **-էք** հոգնակերտ) «1. անվանում, անվանակարգ, 2. կարգ, որով գնահատվում են մրցույթում ներկայացվող աշխատանքները, օրինակ՝ տարվա լավագույն դերասանը են»- <НОМИНАЦИЯ<nominatio< NOMINATION⁹⁵:

ԱՆՎԱՆԱՔԱՐՏ – (գոյական, **հ** հոլովում, **-էք** հոգնակերտ) «բաճկոնին ենին ամրացված որևէ կազմակերպության աշխատակցի քարտ՝ ժողովի մասնակցի ենի անձնական տվյալներով նշան» <БЕЙДЖ<BADGE⁹⁶:

Բառարանի ստեղծումը, անշուշտ, ենթադրում է թիմային աշխատանք՝ ոչ միայն հայերենի և օտար լեզուների, այլև թվային տեխնոլոգիաների մասնագետների մասնակցությամբ:

⁹⁴ Հմմտ. Հայերեն օնլայն բառարան, <https://bararanonline.com/26.09.24>:

⁹⁵ Հմմտ. Ա. Հայրապետյան, Օտար բառերի բառարան, Երևան, 2011, էջ 392:

⁹⁶ Հմմտ. նույն տեղում, էջ 90:

SUMMARY

It is known that the creation of dictionaries requires years of diligent and consistent work, which in turn creates grounds for the creation of new words, new meaning usage of existing words that cannot be included in the given dictionary. Sometimes it is not possible to find foreign versions of a new Armenian word in any paper or online dictionary, because the words included in them are taken from dictionaries downloaded on the Internet, but published earlier. Because of this, in modern times, writing a dictionary only on paper, in the traditional version, may be out of date even at the time of printing. In the article, an attempt was made to show that the effective option is the creation of a new online dictionary, which will be regularly updated by the compilers.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բաղիկյան Խ., Ճիշտ խոսենք հայերեն. Օտարալեզու բառերի բառարան, Երևան, «Լույս» հրատ., 2012, 199 էջ:
2. Բեդիրյան Պ., Հայ-ռուսերեն գործնական բառարան, Երևան, «Անկյունաքար» հրատ., 2010, 577 էջ:
3. Գրիգորյան Խ., Անգլերեն-հայերեն համակարգչային եզրերի բառարան, Երևան, «Անկյունաքար» հրատ., 2004, 338 էջ:
4. Զաքարյան Հ., Փոխառության և նորակազմության խնդրի շուրջ // «Ջահուկյանական ընթերցումներ», Երևան, ԳԱԱ ԼԻ, 2010, էջ 115-125:
5. Հայերեն օնլայն բառարան, [Էլեկտրոնային աղբյուր] <https://bararanonline.com/>, 26.09.24:
6. Հայրապետյան Ա., Օտար բառերի բառարան, Երևան, Հեղինակային հրատ., 2011, 643 էջ: